ԿԱՐԾԻՔ

**ԴԻԱՆԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
«ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԵՎ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ**

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Թեմայի արդիականությունը: Գաղտնիք չէ, որ ժամանակակաից գլոբալացման և տարածաշրջանային ինտեգրման տարբեր դրսևորումների հիմքը միջազգային առևտրային հարաբերություններն են: Վերջինս այն կորիզն է, որի շուրջ խորացել են աշխատանքի միջազգային բաժանման գործընթացները, ստեղծելով տնտեսական զարգացման նոր հնարավորություններ առանձին ազգային տնտեսությունների համար: Արտաքին առևտրի խթանման, մրցունակության բարձրացման, նորանոր շուկաներ ներթափանցման պետական քաղաքականության նպատակը անընդհատ արդիականացող գլոբալ մարտահրավերների ներքո տնտեսական զարգացման նոր հնարավորություններ որոնելն է: Որպես տնտեսական զարգացման ամենաազդեցիկ գործոններից մեկը, արտաքին առևտրային հարաբերությունները, ամենաշատ քննարկված, հետազոտված թեմաներից են, սակայն, հաշվի առնելով վերջինիս բազմաբևեռ ազդեցությունը և կարևորությունը տնտեսական զարգացման վրա, խորը ուսումնասիրության և հետազոտության անհրաժեշտության տեսանկյունից այն չի կորցրել իր արդիականությունը: Վերջինս կարող է կանխորոշել ազգային տնտեսության աճի տեմպը, կառուցվածքը և էական ազդեցություն ունենալ վարվող մակրոտնտեսական քաղաքականության վրա: Այս իմաստով խիստ կարևորվում է արտաքին առետրի ոլորտում պետական կարգավորման լծակների օգտագործման և համալիր միջոցառումների օգնությամբ վճարային հաշվեկշռի կայունացման, արժութային կուրսի

կարգավորման, ֆինանսական քաղաքականության, կապիտալի միջազգային շարժի և երկարաժամկետ ներդրումների ապահովման, հարկային և մաքսային դաշտի կատարելագործման, ինչպես նաև արտաքին տնտեսական անվտանգության ապահովման խնդիրների լուծումը:

Երկրի արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության միջև փոխազդեցության ուսումնասիրությունը տնտեսական զարգացման արդյունավետ ռազմավարություններ ձևավորելու առանցքային ասպեկտներից է: Բազմաթիվ տնտեսական մարտահրավերներ և սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայաստանի Հանրապետության պարագայում այս թեման հատկապես արդիական և կարևոր է դառնում: Հայաստանը մնում է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային տնտեսական զարգացումների կիզակետում, և նրա արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության զարգացումն ուղղակիորեն ազդում է երկրի տնտեսական կայունության և քաղաքացիների բարեկեցության վրա:

Վերոնշյալ խնդիրները կարևոր ու անհրաժեշտ են դարձնում արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչության հիմնախնդիրների ուսումնասիրությունը Հայաստանի համար, ինչով էլ հիմնավորվում է թեմայի արդիականությունն ու հրատապությունը:

Աշխատանքի ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական և մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և նորույթը.

- Արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության հիման վրա, հաշվարկվել են ԵԱՏՄ-ում և ՀՀ-ում աշխատանքի, կապիտալի և ՀՆԱ էլաստիկության գործակիցները և դուրս են բերվել

առևտրաշրջանառություն - կապիտալ ու առևտրաշրջանառություն - աշխատանք քրոսս-էլաստիկության գործակիցները:

- Տրվել են 2007-2009թթ. ճգնաժամի ազդեցության գնահատականները: Գնահատվել է ՀՀ արտաքին առևտրաշրջանառության վրա քովիդ-19-ի ազդեցության քանակական մակարդակը՝ ժամանակային շարքի բաղադրիչների, կեղծ փոփոխականների և ARIMA դասի մոդելներով:
- Տրվել է ՀՀ ԵԱՏՄ-ին անդամակցության էֆեկտի քանակական գնահատականը առևտրաշրջանառության մոդելավորմամբ՝ ժամանակային շարքի բաղադրիչներով:
- Ժամանակային շարքի բաղադրիչներով մոդելավորումը, համադրելով ստատիկ և դինամիկ վերլուծությունների հետ (կանխատեսում-փաստացի համադրություն), առաջադրվել է նոր մոտեցում շոկերի քանակական ազդեցության գնահատման համար: Սույն մոտեցումով տրվել են ՀՀ արտաքին առևտրի վրա ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցության քանակական գնահատականները:
- IS-LM-BP մոդելի միջոցով (պահանջարկի գործոններով) գնահատվել է ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխկախվածությունը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը հիմնավորվում է ստացված արդյունքների կիրառական բնույթով: Վերջիններս կարող են կիրառվել այս կամ այն երկրի արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխկախվածության մակարդակի բացահայտման և այս ոլորտում այլ ուսումնասիրությունների ոլորտում: Մշակված գործիքակազմով կարելի է գնահատել և վերլուծել ՀՀ արտաքին առևտրի հիմնախնդիրները՝ կապված մակրոտնտեսական, ճգնաժամային, քաղաքական և ռազմական տարբեր իրադարձությունների և վայրիվերումների ազդեցությունների հետ՝ տնտեսաչափական մոդելների կիրառմամբ: Կատարված հետազոտությունը կհետաքրքրի այդ հիմնահարցերի վերլուծությամբ զբաղվող տնտեսագետներին, կառավարման մասնագետներին, ինչպես նաև որպես ուսումնական նյութ կարող է ծառայել գիտագործնական սեմինարների և թեմատիկ դասախոսությունների համար:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 102 աղբյուր, և 14 հավելվածից: Աշխատանքի ծավալը կազմում է 127 տպագիր էջ՝ առանց հավելվածների:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

- **Ատենախոսության առաջին՝ «Արտաքին առևտրի եվ մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցության տեսական եվ մեթոդաբանական հիմնադրույթները»** գլխում ուսումնասիրվել են արտաքին առևտրի դինամիկայի վերլուծության և կանխատեսման տեսամեթոդական հիմքերը, ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկան, մակրոտնտեսական քաղաքականությունը, և վերջիններիս փոխկախվածության տեսական դրույթները:

- **Ատենախոսության երկրորդ՝ «Արտաքին առևտուրը որպես Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների մակրոտնտեսական կայունության գործոն»** գլխում վեր է հանվել Եվրասիական տնտեսական միության մակրոտնտեսական քաղաքականությունը, կատարվել է ԵԱՏՄ արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխազդեցության վերաբերյալ վերլուծություն, ինչպես նաև կատարվել է ՀՀ արտաքին առևտրի վրա ԵԱՏՄ անդամակցության էֆեկտի գնահատումը:

- **Ատենախոսության երրորդ՝ «*ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականության փոխազդեցության գնահատականը*»** գլխում իրականացվել է ՀՀ արտաքին առևտրի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա շոկերի ազդեցության մոդելավորումը, ինչպես նաև արվել են ՀՀ արտաքին առևտրի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկախվածության գնահատականները:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ և առաջարկություններ***, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

- Աշխատանքում հեղինակը բավականին ծավալուն կերպով անդրադարձել է համախառն ապրանքաշրջանառության սեզոնայնությանը, հատկապես կենտրոնանալով ԵԱՏՄ շրջանակներում առևտրային հոսքերին: Ավելին, եկել է եզրակացության, որ ԵԱՏՄ-ն ամենաինտենսիվ արտաքին առևտուրն իրականացնում է դեկտեմբերին, իսկ ամենապասիվը՝ հունվարին: Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից նույնաբովանդակ ուսումնասիրության արդյունքում բացահայտվեր· նաև ապրանքաշրջանառության սեզոնային ինտենսիվությունը ապրանքային կառուցվածքի և բովանդակության տեսանկյունից: Վերջինս, կարծում ենք առավել ճշգրիտ կերպով կարտացոլեր օգուտի կամ վնասի հնարավորությունները՝ կապված գործունեության սեզոնի հետ:
- Հեղինակն ատենախոսության մեջ նշում է, որ ԵԱՏՄ մինչև 2030 թ. զարգացման պլանը, ի թիվս այլ նպատակների սահմանման, ներառում է միավորման տնտեսական ներուժի գնահատում (ինտեգրացիոն էֆեկտի չափը)՝ մակրոտնտեսական ցուցանիշների համակարգի միջոցով: Այնուհետև 2.3 հարցի շրջանակներում գնահատելով ՀՀ արտաքին առևտրի վրա ԵԱՏՄ անդամակցության արդյունքը, ընդհանուր առմամբ եկել է է մի շարք եզրահանգումների՝ ԵԱՏՄ անդամակցությունը ՀՀ արտաքին առևտրաշրջանառության վրա ունեցել է բացասական ազդեցություն /62 էջ/, ԵԱՏՄ երկրների ՀՆԱ-ն երբեք չի ազդել Հայաստանի առևտրի ծավալների վրա /էջ66/, ՀՀ տնտեսության վրա ԵԱՏՄ անդամակցությանից էֆեկտ չկա /էջ 67/: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից առավել մանրամասն ուսումնասիրվեր ԵԱՏՄ մինչև 2030 թ. զարգացման պլանը՝ վեր հանելով ինտեգրացիոն էֆեկտի չափը կանխորոշող և բնորոշող այն ցուցանիշները, որոնք փաստացի ՀՀ-ի պարագայում չեն ապահովել ինտեգրացիոն էֆեկտի բավարար մակարդակ:

- էջ 114-ում հեղինակը գրել է . «ՀՀ արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը ոչ բարեհամբավ է, այսինքն՝ ՀՀ-ն հանդես է գալիս որպես սպառող, այլ ոչ արտադրող երկիր»: Ի՞նչ է ուզեցել ասել հեղինակը «բարեհամբավ» որակելով: Ճիշտ կլիներ, եթե աշխատանքում մեկնաբանվեր վերջինս:
- ՀՀ-ԵԱՏՄ շրջանակներում ինտեգրացիոն էֆեկտի բացակայության հանգամանքը հեղինակի կողմից մեկնաբանվել է նրանով, որ առևտրի աճը պայմավորված չէ ԵԱՏՄ-ին անդամակցության հանգամանքով, այլ նախկինում ձեռք բերված առևտրային կապերի և պայմանավորվածությունների արդյունքն է: Կարծում ենք. ԵԱՏՄ անդամակցության էֆեկտը ճիշտ կլիներ դիտարկել նաև ՀՀ – ԵԱՏՄ անդամ չհանդիսացող · երկրներ ապրանքաշրջանառության և ընդհանուր տնտեսական կապերի շրջանակներում, քանի որ պարտավորությունների և իրավունքների շրջանակը, որը հանձն է առել ՀՀ-ն այդ տարածաշրջանային կառույցի շրջանակներում, անմիջականորեն անդրադարձել է այլ երկրների հետ ունեցած տնտեսական հարաբերությունների վրա;

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողություններն էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա: Դիանա Մաթևոսյանի ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ կիրառվել է տնտեսական լավ մշակված գործիքակազմ՝ արտաքին առևտրի և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչությունների հիմնախնդիրներ բացահայտման նպատակով:

Հեղինակը ցուցաբերել է մասնագիտական ու վերլուծական բավականին բարձր մակարդակ, ինչի մասին փաստում են ատենախոսությունում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների ներդաշնակեցմանն ուղղված առավել օպտիմալ որոշումների կայացման տեսանկյունից:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Դիանա Սերգեյի Մաթևոսյանի «ՀՀ արտաքին առևտրային և մակրոտնտեսական քաղաքականությունների փոխառնչության հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ընդդիմախոս՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի գլխավոր մասնագետ,
տ.գ.թ.՝ Նարեկ Յուրիի Հովականյան

14.06.2023թ.

Նարեկ Յուրիի Հովականյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՀՀ հաշվեքննիչ պալատի անձնակազմի կառավարման բաժնի պետ Ռիմա Սիմոնի Բաբայան